

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

\_\_\_\_\_2018 ԹՎԱԿԱՆ N \_ Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ 23 հասցեում գտնվող շենք-շինություններից 37558685 դրամ կադաստրային արժեքով ու 1181.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով (այդ թվում՝ նկուղ 325.2 քառ.մետր) երկհարկանի ուսումնական մասնաշենքը, 818496 դրամ կադաստրային արժեքով ու 20.3 քառ մետր ընդհանուր մակերեսով պահեստը, 3975552 դրամ կադաստրային արժեքով ու 98.6 քառ մետր ընդհանուր մակերեսով արհեստանոցը և 13205106 դրամ կադաստրային արժեքով ու 276.3 քառ մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակները (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) երկամսյա ժամկետում «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 2014 թվականի հուլիսի 10-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 58/0014 պայմանագիրը սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի մասով լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո, քառամսյա ժամկետում «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն ենթակա են իրականացման «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

## ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ և ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### **Անհրաժեշտությունը**

«Հրաձգության հանրապետական մարզադպրոց» հիմնարկը /այսուհետ՝ մարզադպրոց/ հիմնադրվել է 1978 թվականին: Մարզադպրոցը տարիներ ի վեր գործել է Երևանի Բագրատունյաց 48 հասցում տեղակայված ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ին պատկանող տարածքում:

ՀՀ կառավարության որոշման համաձայն մարզադպրոցը 2003թ-ից ՀՀ ԿԳՆ ենթակայության է, սակայն մինչ օրս նրան շենք-շինություններ չեն ամրացվել:

Մարզադպրոցում գործող 22 խմբերում ընդգրկված է 184 սան, որոնց կրթադաստիարակչական գործունեությունն իրականացնում են 11 մարզիչ:

Մարզադպրոցը իր գործունեությունը /գնդակային հրաձգությունը/ իրականացնում է «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» հասարակական կազմակերպությանը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոցի» հրաձգարանում, իսկ նետաձգությունը՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի քոլեջի տարածքում:

#### **Ընթացիկ իրավիճակը**

Մարզադպրոցի գործունեությունը նպատակաուղղված է նախազորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում արմատավորել առողջ ապրելակերպ, դաստիարակել երիտասարդություն՝ պատրաստ հայրենիքի պաշտպանությանը,

ՀՀ ԿԳՆ «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» ՊՈԱԿ-ը արտադպրոցական կրթադաստարակչական ծրագրեր իրականացվող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի գործունեության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

- ի լրումն ՆԶՊ առարկայի, 12-18 տարեկան սովորողների գնդակային հրաձգության և նետաձգության ուսուցման կազմակերպումը,
- սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելը, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, ֆիզիկական զարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպումը,
- մինչև 18 տարեկան, անհրաժեշտության դեպքում նաև բարձր տարիքի սովորողների հոգևոր և ֆիզիկական դաստիարակության ապահովումը, կամային որակների ձևավորումը,

- հրաձգության և նետաձգության ՀՀ ազգային հավաքականների համար թեկնածուների պատրաստումը, ՀՀ զինված ուժերում ծառայության անցնելու նպատակով նախազորակոչիկներից բարձր կարգի հրաձիգների պատրաստումը:

Մարզադպրոցի հիմնական նպատակներն ու խնդիրներն անխափան իրականացնելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան տարածք, ինչպես նաև ունենալ նյութատեխնիկական բազա:

#### **Կարգավորման նպատակը**

Հաշվի առնելով հրաձգության մարզադպրոցի դերը նախազորակոչային տարիքի դպրոցականների դաստիարակության, նախնական զինվորական պատրաստության առարկայի արդյունավետության բարձրացման և նշանակությունը երկրի պաշտպանության ոլորտի համար, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունն առաջարկում է «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված երկհարկանի մեկ ուսումնական մասնաշենքը և օժանդակ շինությունները/ավտոտնակները, արհեստանոցը, պահակատուն/ հետ վերցնել և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Նշված ուսումնական մասնաշենքը չափագրվել է Արմեն Էռնեստի Բեկնազարյանի կողմից/ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված 24.12.2013թ. հ. 0303 վկայական/:

#### **Ակնկալվող արդյունքը**

Նախագծի ընդունումը կնպաստի Մարզադպրոցի գործունեության արդյունավետ կազմակերպմանը:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին:**

«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին**

«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների**

N/N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 06.03.2018թ. N01/14/3971-18	Առաջարկություն և դիտողություն չունի		
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 26.02.2018թ. N01/9-5/3324-18	Առաջարկում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ և ներքին իրավական ակտերը պետք է ունենան վերնագրեր: Իրավական ակտի վերնագիրը պետք է համապատասխանի իրավական ակտի բովանդակությանը և հակիրճ տեղեկատվություն պարունակի դրա կարգավորման առարկայի մասին: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծով կարգավորվում են «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունից անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հետ վերցնելու և վերջինս «Հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու հետ կապված հարաբերությունները՝ առաջարկում ենք Նախագծի վերնագիրը խմբագրել՝ համապատասխանեցնելով իրավական ակտի բովանդակությանը:	<b>Ընդունվել է</b>	Որոշման նախագծի վերնագիրը լրամշակվել է առաջարկին համապատասխան
3.	ՀՀ կառավարությանն առնչվող պետական գույքի կառավարման վարչություն 26.02.2018թ. N01/22.2/1345-18	Առաջարկում է. 1) Որոշման նախագծի նախաբանում հղում կատարել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածին,	1.Ընդունվել է	1. Որոշման նախագծի նախաբանում հղում է կատարվել առաջարկին համապատասխան: Որոշման նախա-

		<p>2) Որոշման նախագծի 1-ին կետում &lt;Գես&gt; բառը փոխարինել &lt;&lt;ԷԿ&gt; բառով, &lt;պահակատունը&gt; բառը՝ &lt;պահեստը&gt; բառով, &lt;ավտոտնակները&gt; բառից հետո լրացնել &lt;(այսուհետ՝ անշարժ գույք)&gt; բառերը, իսկ ուսումնական մասնաշենքի մակերեսը նշել չափագրման արդյունքում ստացված մակերեսը,</p> <p>3) Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում &lt;հուլիսի 2-ին&gt; բառն ու թիվը փոխարինել &lt;հուլիսի 10-ին&gt; բառով ու թվով,</p> <p>4) Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում &lt;տարածքի&gt; բառը փոխարինել &lt;անշարժ գույքի&gt; բառերով, իսկ 2-րդ կետի 2-րդ ենթակետում &lt;սահմանել, որ&gt; բառերը փոխարինել &lt;՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և&gt; բառերով:</p>	<p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Ընդունվել է</p>	<p>գծում կատարվել է փոփոխություն և լրացում:</p> <p>3.Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում կատարվել է փոփոխություն:</p> <p>4.Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում և իսկ 2-րդ կետի 2-րդ ենթակետում կատարվել է փոփոխություն:</p>
<p>4.</p>	<p>&lt;&lt; կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 20.02.2018թ. ՄՍ/1061-18</p>	<p>Առաջարկում է</p> <p>1.Որոշման նախագծի 1-ին կետում՝</p> <p>1) &lt;&lt;Երևան քաղաքի Քանաքեռ Գես 23 հասցեում գտնվող&gt;&gt; բառերը փոխարինել &lt;&lt;Երևան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ 23 հասցեում գտնվող 3380.65 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքներից&gt;&gt; բառերով, նկատի ունենալով 10.06.2014թ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10062014-01-0074 վկայականի (այսուհետ՝ վկայական) տվյալները.</p> <p>2) &lt;&lt;պահակատունը&gt;&gt; բառը փոխարինել &lt;&lt;պահեստը&gt;&gt; բառով, նկատի ունենալով վերը նշված վկայականի տվյալները.</p> <p>3) &lt;&lt;/արտաքին մակերեսը՝ 122.4 քառ.մետր/&gt;&gt;, &lt;&lt;/արտաքին մակերեսը՝ 30.55 քառ. մետր/&gt;&gt; և &lt;&lt;/արտաքին մակերեսը 276.3 քառ. մետր/&gt;&gt; բառերը հանել, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի</p>	<p>1.Ընդունվել է մասնակի</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>1. Որոշման նախագծի 1-ին կետում «Երևան քաղաքի Քանաքեռ Գես 23 հասցեում գտնվող» բառերը փոխարինել «Երևան քաղաքի Քանաքեռ ՀԷԿ 23 հասցեում գտնվող» բառերով իսկ առաջարկվող «3380.65 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքներից» բառերը Որոշման նախագծում չի ներառվել, սակայն Որոշման նախագծում «գտնվող» բառից հետո լրացվել է «շենք-շինություններից» բառերը:</p> <p>2.Որոշման նախագծում «պահակատուն» բառը փոխարինվել է «պահեստ» բառով:</p> <p>3.Որոշման նախագծի 1-ին կետը լրամշակվել է , կատարվել է անշարժ գույքի արժեքների ճշգրտում:</p>

		<p>պետական կոմիտեի նախագահի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 283-Ն հրամանով հաստատված հրահանգի պահանջները:</p> <p>2. 2-րդ կետի 1-ին ենթակետում՝ &lt;&lt;տարածքի&gt;&gt; բառը փոխարինել &lt;&lt;տարածքների&gt;&gt; բառով, նկատի ունենալով նախագծի 1-ին կետի պահանջները:</p> <p>Միաժամանակ նախագծի 1-ին կետի վերաբերյալ առաջարկվող փոփոխությամբ անհրաժեշտություն է առաջանում կրկին անգամ ճշգրտել նախագծում նշված տարածքների կադաստրային արժեքները:</p>		
--	--	--	--	--

**ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Անշարժ գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

**ՀՀ կրթության և գիտության  
նախարարության աշխատակազմի  
իրավաբանական վարչության պետ՝**

**ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**